ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԻՍՏԻ

Ք.Մասիս 10.01.2025թ

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Նորայր Հակոբյան- համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Նվարդ Սահակյան- համայնքի ղեկավարի օգնական

Հանձնաժողովի քարտուղար՝ Անգելինա Խաչատուրյան - համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /զարգացման և ներդրումների գծով/

Հանձնաժողովի անդամներ՝

Ծովինար Գալստյան- աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ

Սամվել Համբարձումյան-<<Մասիս համայնքի բնակչության հատուկ սպասարկում և համայնքի ենթակառուցվածքների սպասարկում>> ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ

Տիգրանուհի Սուքեյան - ՀԵԾ <<Աստղաբնակ>> ՀԿ-ի նախագահ

Արսեն Եղիազարյան-համայնքի ավագանի

Լիլիթ Բաբայան- համայնքի բնակիչ

Արմեն Գրիգորյան - կամավոր

Մակիչ Պողոսյան – կամավոր

Օրակարգ

Մասիս համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում նախապատրաստական փուլի ավարտի ամփոփում:

Լսեցին.

1. <u>Հանձնաժողովի նախագահ Նորայր Հակոբյանին</u>,

Նա ողջունեց հանձնաժողովի անդամներին, նշեց մասնակցային բյուջետավորման գործընթացի կարևորությունը և արձանագրեց, որ գործընթացի նախապատրաստական փուլն ավարտվել է:

2. <u>Հանձնաժողովի նախագահի տեղակալ Նվարդ Սահակյանին,</u>

Նա ներկայացրեց նախապատրաստական փուլի ավարտի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն"

- Մասիս համայնքի ավագանու 2024թ դեկտեմբերի 13-ի թիվ 345-Ն որոշմամբ սկիզբ է դրվել մասնակցային բյուջետավորման գործընթացը:
- Համայնքի ղեկավարի 2025թ հունվարի 8-ի թիվ 28-Ա որոշմամբ ստեղծվել է գործընթացի կառավարման հանձնաժողով, հաստատվել են հանձնաժողովի իրավասությունները, գործընթացի իրականացման ընթացակարգերը, չափանիշները և ձևաթղթերը:

Առաջարկեց կազմել միջոցառումների իրականացման ժամանակացույց և ներկայացնել Մասիս համայնքի ղեկավարի հաստատմանը:

Հանձնաժողովը որոշեց.

1"*Մասնակցային բյուջետավորման գործընթացի նախապատրաստական փուլի ամփոփումը* գնահատել դրական:

2"Միջոցառումների իրականացման ժամանակացույցը ներկայացնել համայնքի ղեկավարի հաստատմանը:

3" Սկսել իրազեկման փուլը:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Նորայր Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Անգելինա Խաչատուրյան